ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2019/45

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.02.2019թ. թիվ 01.1/26-3/2524-19 գրությամբ «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02238317) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 12.02.2019թ. թիվ դվա/556 գրության հիման վրա, 19.02.2019թ. նախաձեռնել է «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 12.02.2019թ. թիվ դվա/556 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի միջև 26.09.2018թ. կնքված N ԲՄԱՇՁԲ-4/7-1 ծածկագրով պայմանագրի 2.1.7 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. փետրվարի 7-իվ միակողմանի մասնակի լուծել է վերը նշված պայմանագիրը՝ 1435 հատ բեռնատար մեքենաների պահեստամասերի մասով (թերմոստատ, էլեկտրական ձայնային ազդանշան, արգելակման կոճղակների մակարդակ, ցնցամեղմիչ, կոմպրեսոր հավաքական հեղուկային հովացումով, արգելակման կոճղակների մակարդակ, շրջադարձի հոդակապ աջ, շրջադարձի հոդակապ ձախ, վառոցքի անջատիչ հավաքական, կցորդման սկավառակ սեղմվող զամբյուղ հավաքական, ջրի մղիչ հավաքական, կցորդման համակարգի սեղմող առանցքակալ, խոնավաչորացուցիչի զտիչ)՝ 4720200 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 08.02.2019թ. ուղարկվել է մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.procurement.am հասցեով ինտերնետային կայքում»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել որևէ լիազորված ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

3. <u>«Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն ընձեռելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.02.2019թ. թիվ

01.1/26-3/2524-19 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել որևէ լիազորված ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

4. <u>ՍՑ-ԷՍ-2019/45 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 19.02.2019թ. թիվ 01.1/26-3/2524-19 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.02.2019թ. թիվ դվա/556 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության և «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի միջև 26.09.2018թ. կնքված N ԲՄԱՇՁԲ-4/7-1 ծածկագրով պայմանագիրը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի միջև 26.09.2018թ. կնքվել է N ԲՄԱՇՁԲ-4/7-1 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

• 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

• 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

• 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

• 3.2.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր է Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

• 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

• 3.1 կետի համաձայն՝ Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 19 297 880 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

• 5.1 կետի համաձայն՝ մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

• 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի N1 հավելվածը հանդիսացող՝ գնման ժամանակացույցի համաձայն՝ Վաճառողի կողմից պետք է կատարվեր հետևյալ անվանումներով ապրանքների մատակարարումը.

Գնման ժամանակացույց.

Հ/Հ	Անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Մատակարարման ժամկետը
						2018թ. 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 10.12.2018թ.
3	Հովացման համակարգի ռադիատոր	հատ	10	150000	1,500,000	10
5	Վառոցքի կոճ	հատ	100	5000	500,000	100
7	Թերմոստատ	հատ	50	1500	75,000	50
8	Էլեկտրական ձայնային ազդանշան	հատ	50	5000	250,000	50
10	Արգելակման թմբուկ	հատ	18	36500	657,000	18
11	Արգելակման կոճղակների մակադրակ	հատ	400	1600	640,000	400
12	Առջևի կամրջակի կարդանային լիսեռ հավաքական	հատ	20	58200	1,164,000	20
13	Հետին կամրջակի կարդանային	հատ	20	58000	1,160,000	20

	լիսեռ հավաքական					
14	Շրջադարձի ցուցիչի ընդհատիչ	հատ	30	2100	63,000	30
15	Ռադիատորի երեսապատում խողիրդանիշով հավաքական	հատ	30	6500	195,000	30
16	Ցնցամեղմիչ	հատ	20	10300	206,000	20
20	Ձեռքի արգելակման համակարգի մետաղաճոպան	հատ	80	2500	200,000	80
21	Գեներատոր հավաքական	հատ	30	36500	1095000	30
22	Կոմպրեսոր հավաքական հեղուկային հովացումով	հատ	15	6000	900,000	15
23	Արգելակման կոճղակների մակադրակ	հատ	600	900	540,000	600
26	Արգելակման կոճղակների մակադրակ	հատ	300	880	264,000	300
27	Շրջադարձի ցուցիչ ընդհատիչ հավաքական	հատ	100	800	80,000	100
29	Կարդանային լիսեռ	հատ	10	30300	303,000	10
30	Կարդանային լիսեռ	հատ	10	33000	330,000	10
31	Կարդանային լիսեռ	հատ	10	30750	307,500	10
32	Գլխավոր արգելակման գլան հավաքական (հեղուկի տակառով)	հատ	15	14000	210,000	15
33	Կարդանային լիսեռի խաչուկ	հատ	50	2380	119,000	50
34	Շրջադարձի հոդակապ աջ	հատ	20	15450	309,000	20
35	Շրջադարձի հոդակապ ձախ	հատ	20	15500	310,000	20
36	Գործարկիչ	հատ	30	29400	882,000	30
42	Վառոցքի անջատիչ հավաքական	հատ	20	6800	136,000	20
48	Կցորդման սկավառակ սեղմվող, զամբյուղ հավաքական	հատ	10	12500	125,000	10
49	Առջևի արգելակների կոճղակներ	լ-կ	50	3950	197,500	50
50	Արգելակման սկավառակ	հատ	10	12350	123,500	10
53	Հողմապակի	հատ	20	9450	189,000	20
54	Վառելիքի մղիչ էլեկտրական	հատ	30	22450	673,500	30
56	Ռադիատորի փողրակների լրակազմ	լ-կ	43	1200	51,600	43
57	Ջրի մղիչ հավաքական	հատ	30	11200	336,000	30
61	Փոխանցումների և բաժանարար տուփ հավաքական	լ-կ	2	412200	824,400	2
62	Փոխանցումների տուփի միջանկյալ լիսեռ հավաքական	հատ	10	21300	213,000	10
65	Կցորդման համակարգի զուգավորման ագույց առանցքակալով հավաքական	հատ	30	3950	118,500	30
66	Կցորդման համակարգի սեխմող առանցքակալ	հատ	60	1820	109,200	60
67	Բաշխիչի կափարիչ պղնձե հպակներով	հատ	99	820	81,180	90
68	Կողային հայելի աջ	հատ	50	2350	117,500	50
69	Կողային հայելի ձախ	հատ	50	2350	117,500	50
75	Շարժաթևային ներդրակներ	լ-կ	10	18500	185,000	10
76	Արմատական ներդրակներ	լ-կ	10	17500	175,000	10
78	Օդի էլեկտրոմագնիսական փական	հատ	10	22500	225,000	10
79	Պնեվմոհիդրոուժեղարար	հատ	20	94300	1,886,000	20
81	Կցորդման համակարգի զամբյուղ հավաքական	հատ	5	57000	285,000	5
82	Արգելակային խուց	հատ	10	8500	85,000	10
84	Խոնավաչորացուցիչի զտիչ	հատ	140	5600	784,000	140

Ընդ որում, մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 2018թ. 4-րդ եռամսյակը, բայց ոչ ուշ, քան՝ 10.12.2018թ.:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը 15.01.2019թ. Պայմանագրի կատարման վերաբերյալ եզրակացությամբ արձանագրել է, որ Պայմանագրի շրջանակներում «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ն չի մատակարարել հետևյալ ապրանքատեսակները. «թերմոստատ, էլեկտրական ձայնային ազդանշան, արգելակման կոճղակների մակարդակ, ցնցամեղմիչ, կոմպրեսոր հավաքական հեղուկային հովացումով, արգելակման կոճղակների մակարդակ, շրջադարձի հոդակապ աջ, շրջադարձի հոդակապ ձախ, վառոցքի անջատիչ հավաքական, կցորդման սկավառակ սեղմվող զամբյուղ հավաքական, ջրի մղիչ հավաքական, կցորդման համակարգի սեղմող առանցքակալ, խոնավաչորացուցիչի զտիչ»: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Պատվիրատուի կողմից Պայմանագրի կատարման վերաբերյալ տրվել է բացասական եզրակացություն:

ՀՀ պաշտպանության փոխնախարարին ուղղված՝ 17.01.2019թ. գրությամբ ՀՀ ԶՈՒՆ սպառազինության պետ-վարչության պետը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի միջև 26.09.2018թ. կնքված N ԲՄԱՇՁԲ-4/7-1 ծածկագրով պայմանագրի կատարման շրջանակներում Ընկերության կողմից կատարվել է Պայմանագրի էական խախտում, և առաջարկել է Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ միակողմանի մասնակի լուծել Պայմանագիրը 7-րդ, 8-րդ, 11-րդ, 16-րդ, 22-րդ, 23-րդ, 34-րդ, 35-րդ, 42-րդ, 48-րդ, 57-րդ, 66-րդ, 84-րդ չափաբաժինների մասով:

ՀՀ պաշտպանության նախարարությունը «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ին ուղղված 08.02.2019թ. թիվ ԴՎԱ/517 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի միջև 26.09.2018թ. կնքված N ԲՄԱՇՁԲ-4/7-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում Ձեր ընկերությունը 7-րդ, 8-րդ, 11-րդ, 16-րդ, 22-րդ, 23-րդ, 34-րդ, 35-րդ, 42-րդ, 48-րդ, 57-րդ, 66-րդ, 84-րդ չափաբաժինների մասով 2018թ. 4-րդ եռամսյակի ընթացքում պետք է մատակարարվեր 1435 հատ բեռնատար մեքենաների պահեստամասեր (թերմոստատ, էլեկտրական ձայնային ազդանշան, արգելակման կոճղակների մակարդակ, ցնցամեղմիչ, կոմպրեսոր հավաքական հեղուկային հովացումով, արգելակման կոճղակների մակարդակ, շրջադարձի հոդակապ աջ, շրջադարձի հոդակապ ձախ, վառոցքի անջատիչ հավաքական, կցորդման սկավառակ սեղմվող զամբյուղ հավաքական, ջրի մղիչ հավաքական, կցորդման

համակարգի սեղմող առանցքակալ, խոնավաչորացուցիչի զտիչ)՝ 4 720 200 ՀՀ դրամի ընդհանուր արժողությամբ, որոնք չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարության նախարարությունը 2019թ. փետրվարի 7-ին միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը»:

Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը Պատվիրատուի կողմից 08.02.2019թ. հրապարակվել է նաև www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պաշտպանության նախարարության և «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի միջև 26.09.2018թ. կնքվել է N ԲՄԱՇՁԲ-4/7-1 ծածկագրով գնման պայմանագիրը, որով Ընկերությունը պարտավորվել է մատակարարել թվով 47 անուն ապրանքատեսակ (47 չափաբաժին), և որի գնման ժամանակացույցի համաձայն՝ մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 2018թ. 4-րդ եռամսյակը, բայց ոչ ուշ, քան 10.12.2018թ.:

- Պայմանագրի ընդհանուր գինը կազմել է 19 297 880 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

- Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը 15.01.2019թ. Պայմանագրի կատարման վերաբերյալ տրված եզրակացությամբ արձանագրել է, որ տվյալ օրվա դրությամբ «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ն չի մատակարարել Պայմանագրի գնման առարկայի 7-րդ, 8-րդ, 11-րդ, 16-րդ, 22-րդ, 23-րդ, 34-րդ, 35-րդ, 42-րդ, 48-րդ, 57-րդ, 66-րդ և 84-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները՝ 4 720 200 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ:

- ՀՀ պաշտպանության նախարարության և «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի միջև 26.09.2018թ. կնքված N ԲՄԱՇՁԲ-4/7-1 ծածկագրով գնման պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանի մասնակի լուծվել է, և Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը 08.02.2019թ. հրապարակվել է www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ն Պայմանագրով նախատեսված ապրանքները նույն Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետում չմատակարարելով՝ խախտել է Պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

ՈՐՈՇԵՑ

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.02.2019թ. թիվ 01.1/26-3/2524-19 գրությամբ «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02238317) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ